Հաշվետվություն

2017 թվականի դեկտեմբերի 22-ից 24-ը Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա)՝ փրկարարի օրվան նվիրված տոնակատարություններին մասնակցության

1. **Անունը, ազգանունը.**

   Դավիթ Տոնոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա:

4. **Հրավիրող կողմը.**

   Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման նախարարություն:

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն ՌԴ փրկարարի օրվան նվիրված տոնակատարություններին:

6. **Քննարկված թեմաները.**

   Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման նախարար Վ. Պուչկովի հետ քննարկվել է երկկողմ համագործակցության խորացման հարցը. համագործակցության հիմնական շեշտը դրվել է հայ-ռուսական հումանիտար արձագանքման կենտրոնի շարունակական ֆինանսավորման և նոր գույքով ապահովելու գործընթացի վրա:

   Գերմանիայի Դաշնային Հանրապետության ներքին գործերի նախարարության տեխնիկական օգնության դաշնային բյուրոյի ղեկավար Ալբրեխտ Բրյոմմեի հետ քննարկվել է ՀՀ ԱԻՆ-ի հետ իրականացվող ծրագրերի հարցը, որի շրջանակներում ՀՀ ԱԻՆ-ին կտրամադրվի գույք և տեխնիկա:

   Ուզբեկստանի ԱԻ նախարար Ռ. Ջուրաևի հետ քննարկվել են ՀՀ ԱԻՆ-ի և Ուզբեկստանի ԱԻՆ-ի հետ համագործակցության խթանման հարցը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Կազմակերպված այցի ժամանակ հանդիպումներ եմ ունեցել Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման նախարար Վ. Պուչկովի, Ուզբեկստանի ԱԻ նախարար Ռ. Ջուրաևի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության ներքին գործերի նախարարության տեխնիկական օգնության դաշնային բյուրոյի ղեկավար Ալբրեխտ Բրյոմմեի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Քննարկվեց հայ-ռուսական հումանիտար արձագանքման կենտրոնի՝ օդային տրանսպորտի տրամադրման հարցը, որն էլ իր հերթին հնարավորություն կտա կենտրոնի ռեսուրսները օգտագործել ինչպես տարածաշրջանում, այնպես էլ դրա սահմաններից դուրս:

Ուզբեկստանի ԱԻ նախարարի հետ ձեռք բերվեց պայմանավորվածություն կնքել համաձայնագիր ՀՀ ԱԻՆ-ի և Ուզբեկստանի ԱԻՆ-ի միջև փորձի փոխանակման և հետագա համագործակցության նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվեց հայ-ռուսական հումանիտար արձագանքման կենտրոնի նախահաշիվների, ծախսերի և կենտրոնին վերաբերող ֆինանսատնտեսական այլ հարցերի քննարկումները և լուծումները իրականացնել երկկողմ համաձայնությամբ ու ռուսական կողմի աջակցությամբ՝ ակտիվացնելով հումանիտար կենտրոնի կառավարման խորհրդի նախաձեռնողական աշխատանքը:

ՀՀ ԱԻՆ աշխատակազմի արտաքին կապերի վարչությանը հանձնարարվել է մինչև 20.02.2018թ. մշակել և Ուզբեկստանի ԱԻՆ ներկայացնել միջգերատեսչական համագործակցության համաձայնագրի նախագիծ:

10. Գործուղվողը.

Դավիթ Տոնոյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը.

26.12.2017թ.